տեսի. ամանելով պիտի պահեն ապա ուտեն։ Այլ եւ խաղող ազգի ազգի եւ մեծ ողկոյզ։ Այլ եւ ամենայն բարիքն առատ եւ լի. հացն սպիտակ եւ մեղրն սպիտակ, եուղն ազնիւ եւ
15 ըստ պատմութեան լրտեսիցն.

Թէպէտ քարուտ եւ անջրդի,
այլ ամենայն բարեօք է լի։

Եւ ի մեր ժուկն կշռեցաք մէկ ողկոյզն օխա ու կէս ելաւ. փա՛ռք Աստուծոյ։ Վարդն
20 խիստ զարմանալի հոտ ունի. որ զջուրն յերկրէ յերկիր տանին արմատան եւ ընծայ։ Այլ եւ գինին աժան եւ ուժով է, որ մարդ առանց ջրի չկարէ ըմպել, սաֆի սպիտակ. կարմիր չկայ։ Զէթեաղին օխան հինգ ստակ. եւ չի-
25 րիկն։ Գէրմակ հաց կ՝ելնէն, սօմին եւ փիթայ. չախալ հացն քան զամէնն անուշ։ Կաթն, մածուն, խայմախ, կարագ յոյժ համեղ. եւ տաբլին ի բուն զտանի։ Զէրա ամէն ամառ, եւ ձմեռ չկայ. անասունքն երկու անգամ ծնա-
30 նէին. երկու անգամ սերմանեն եւ երկու՝ հնձեն։ Այլ տօնեն զառն լինի. բայց անդ ուրն աւելի է քան զգառն անուշ, զոր եւ մեք հիացեալ էաք ի ճաշակն։ Խիար, վարդ, զարի տօնին հասնի. այլ եւ հասբլն։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ

35 Կայր սուրբ Երուսաղէմ ԺԲ տուն հայի բնական, բայց աղքատ. ամէնն ջուլֆայ են եւ գօտէգործ. թէսմայ եւ գուստիկ բանին ուխ-

19 փառ։ — 21 ընծա։ — 22 յուժով։ — 27 կարաք։